ConverseBank

Նվազեցման իրավունքով
Ժամկետային ավանդի տեղեկատվական ամփոփագիր

Օգոստոսի 7, 2017

Ավանդի ընդունման պայմաններն են՝

Ավանդատու	Ֆիզիկական անձ
Ավանդի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
Ավանդի տեսակ	Առանց ավելացման իրավունքի Նվազեցման իրավունքով
Ներդրվող նվազագույն գումար	500,000 ՀՀ դրամ 1,000 ԱՄՆ դոլար կամ Եվրո
Ավանդի առավելագույն գումար	50,000,000 ՀՀ դրամ 100,000 ԱՄՆ դոլար կամ Եվրո
Բաշխման ժամանակահատված	Սկսած ավանդի 13-րդ ամսից
Ավանդի գործողության ժամկետ (ներառյալ բաշխման ժամանակահատվածը)	2 - 5 տարի
Բաշխման ժամանակահատվածում նվազեցումների պարբերականությունը՝ հաճախորդի ընտրությամբ	Պարբերական ▪ ամսական ▪ եռամսյակային ▪ կիսամյակային Խառը, սակայն բոլոր նվազեցումների հանրագումարը չպետք է գերազանցի ավանդի գումարի 40%
Բաշխման ժամանակահատվածում նվազեցումների իրականացում	Բաշխման յուրաքանչյուր պարբերականության վերջում
Տոկոսների վճարում	Ավանդի ժամկետի վերջում Տարեկան մեկ անգամ հաշվարկված տոկոսները հաշվեգրվում են ավանդի մնացորդի վրա

Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույք

Ավանդի արժույթը	**Ավանդի ժամկետը՝ տարիներով**			
	2	**3**	**4**	**5**
ՀՀ դրամ	ԿԲՀՏ[1] - 0.75%	ԿԲՀՏ - 0.5%[1]	ԿԲՀՏ[1] - 0.25%	ԿԲՀՏ[1]
ԱՄՆ դոլար	ԿԲՀՏ[1] - 2%	ԿԲՀՏ[1] - 1.5%	ԿԲՀՏ[1] - 1%	ԿԲՀՏ[1] - 0.5%
Եվրո	ԿԲՀՏ[1] - 2%	ԿԲՀՏ[1] - 1.75%	ԿԲՀՏ[1] - 1.5%	ԿԲՀՏ[1] - 1.25%

[1] ԿԲՀՏ - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույք, որը կարող եք գտնել Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքում և Բանկում տեղադրված ցուցանակներից/սպասարկման սրահի էկրաններից:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով:

Հաշվարկման օրինակ

Հետևյալ պայմանների դեպքում՝

Ավանդի սկզբնական գումար	10,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ներդրման օր	01/01/2017
Ավանդի ներդրման ժամկետ	4 տարի (մինչև 01/01/2021)
Տարեկան տոկոսադրույք	11.25%
Տոկոսների հաշվեգրում	Տարեկան մեկ անգամ հաշվարկված տոկոսները հաշվեգրվում են ավանդի մնացորդի վրա: Այս օրինակում հաշվեգրումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա առաջին օրը:
Բաշխման պարբերականություն	Կիսամյակային
Եկամտային հարկ	10% տոկոսային եկամտից

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝

Ավանդի մնացորդ X տարվա օրերի քանակ՝ չհաշված ավանդի ներդման օրը X տարեկան պարզ տոկոսադրույք / տարվա օրերի քանակ

Ավանդի առաջին տարվա (01/01/2017 մինչև 01/01/2018 ներառյալ) համար հաշվարկված տոկոսագումարը կկազմի `

10,000,000 X 365 X 11.25% / 365 = 1,125,000

Տոկոսագումարները հաշվեգրվում են ավանդային հաշվին տարեկան կտրվածքով:

Հաշվեգրվող տոկոսագումարից նվազեցվում է հարկը՝ 10% չափով, հետևաբար ավանդային հաշվին հաշվեգրվող գումարը կկազմի `

1,125,000 X 90% = 1,012,500

Բաշխման ժամանակահատվածում կատարվող նվազեցումները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Ավանդի մնացորդ ներդրումից մեկ տարի անց / (բաշխման ժամանակահատվածը՝ տարիներով X տարվա ընթացքում նվազեցումների քանակը)

Այս օրինակում յուրաքանչյուր նվազեցում կկազմի՝

11,012,500 / (3 X 2) = 1,835,416.67

Նվազեցումները կատարվում են յուրաքանչյուր կիսամյակի վերջին օրը:

Այս օրինակում բաշխման ժամանակահատվածի ընթացքում կատարվում է 6 նվազեցում:

Հաշվի առնելով նվազեցումները՝ ավանդի երկրորդ տարվա համար (01/01/2018 մինչև 01/01/2019 ներառյալ) հաշվարկված տոկոսագումարը կկազմի *1,135,069.14*, հետևաբար հարկումից հետո ավանդային հաշվին կհաշվեգրվի *1,021,562.22*

Նման կերպով տոկոսագումարները հաշվարկվում են մնացած տարիների համար, մինչև ավանդի ժամկետի ավարտը:

ConverseBank

Արդյունքում ավանդի բաշխման ժամանակահատվածում տոկոսագումարների հանրագումարը հարկումից հետո կազմում է *2,234,203.96* ՀՀ դրամ, որը հաճախորդին վճարվում է ավանդի ժամկետի վերջում, իսկ ավանդի մայր գումարը (ներառյալ առաջին տարվա հաշվեգրված տոկոսը) *11,012,500* ՀՀ դրամի չափով հաճախորդին վճարվում է պարբերական (այս օրինակում՝ կիսամյակային) նվազեցումների ձևով (յուրաքանչյուրը՝ *1,835,416.67* ՀՀ դրամի չափով) բաշխման ժամանակահատվածի ընթացքում:

Ավանդի հաշվիչ - https://conversebank.am/hy/decreasedepositcalc

Ուշադրություն

Հաշվեգրման ենթակա տոկոսներից գանձվում է եկամտային հարկ: ՀՀ տարածքում ներդրված ավանդների համար եկամտային հարկը կհաշվարկվի 10% դրույքաչափով, իսկ ԼՂՀ տարածքում՝ 5% դրույքաչափով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափը

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք դուք, եթե ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ ««Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02»-ով սահմանված հետևյալ բանաձևը՝

$$APY=(1+r/n)^n-1,$$

որտեղ՝

- APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է.
- r - տարեկան պարզ տոկոսադրույքն է.
- n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափերը հավասար են Ավանդի համապատասխան տարեկան պարզ տոկոսադրույքներին:

Ավանդի ընդունման ընդհանուր պայմանները

1. Ավանդի ներդրումը հավաստվում է պայմանագրով:
2. Պայմանագրով որպես ավանդատու կարող են հանդիսանալ մեկից ավելի անձիք, այդ դեպքում պայմանագիրը ստորագրվում է բոլորի կողմից և ավանդի տնօրինումն ու օգտագործումը կատարվում է համատեղ սեփականության իրավունքով:
3. Եթե ավանդատու են հանդիսանում մեկից ավելի անձինք, ապա ավանդի գումարը և նրա վրա հաշվարկված տոկոսները կարող են վճարվել կամ բոլորի պարտադիր ներկայությամբ կամ միայն որևէ մեկին՝ մյուսների կողմից ստորագրված և նոտարական կարգով վավերացված լիազորագրի հիման վրա:
4. Ավանդատուն իրավունք ունի ավանդը Բանկ ներդնել երրորդ անձի անունով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տոկոսների հաշվարկման և վճարման կարգը

1. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ՝ ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
2. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է պարզ տոկոսադույքով՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 կամ 366 օր նահանջ տարվա համար:
3. Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:

4. Ժամկետային ավանդը արտարժույթով ներդնելու դեպքում տոկոսագումարները ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի առքի փոխարժեքով:
5. Ավանդային պայմանագրով որոշված տոկոսադրույքի չափը ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:
6. Ավանդի գումարի վրա հաշվարկված տոկոսները, որոնք ավանդատուն բանկային ավանդի պայմանագրում նշված ժամկետում չի ստացել, Բանկի կողմից վճարվում են ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում:
7. Ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, եթե ավանդատուն չի պահանջում վճարել ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի համար սահմանված պայմաններով:

Լրացուցիչ տեղեկատվություն

1. Ժամկետային ավանդային հաշվի բացումը և սպասարկումն անվճար է:
2. Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ավանդային հաշիվը փակվում է:
3. Ավանդատուի կողմից ավանդային հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն կարող իրականացվել:
4. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին մուտքագրված միջոցները ավանդատուին վճարելիս միջնորդավճար չի գանձվում:
5. Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է և Բանկը երաշխավորում է դրա գաղտնիությունը:

Ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծումը

1. Եթե ժամկետային ավանդը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ապա ներկայացված դիմումի հիման վրա կատարվում է տոկոսի վերահաշվարկ՝ դադարեցման օրվանից հաշվարկված նախորդ մեկ տարվա ընթացքում կուտակված և վճարված տոկոսների մասով. Ավանդի գործողության ընթացքում Ավանդի միջին օրական մնացորդից հանվում է Բանկի կողմից հաշվարկված տոկոսագումարը, և այդ տոկոսագումարի նկատմամբ կատարվում է վերահաշվարկ՝ Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով: Մինչ այդ (նախորդ մեկ տարին սկսելուն նախորդող տարվա վերջին օրը) հաշվարկված և հաշվեգրված տոկոսների մասով վերահաշվարկ չի կատարվում:
2. Եթե ավանդատուն լուծում է արտարժութային ժամկետային ավանդի պայմանագիրը՝ անմիջապես նույն պայմաններով ՀՀ դրամով ժամկետային ավանդի պայմանագիր կնքելու պայմանով, ապա տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

ConverseBank

Քաղվածքների և տեղեկանքների տրամադրման սակագներ

Քաղվածքների տրամադրում առձեռն՝ Բանկի տարածքում (ներառյալ ԱԱՀ)	
Ֆիզիկական անձանց համար	30-օրյա պարբերականության դեպքում՝ 0 ՀՀ դրամ Կրկնօրինակի դեպքում՝ 500 ՀՀ դրամ

Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանքներ (ներառյալ ԱԱՀ)	
Ժամկետային ավանդի մնացորդի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	6,000 ՀՀ դրամ

Փաստաթղթերի, գործարքի կատարման հիմքերի և այլ տեղեկատվության պատճեններ (ներառյալ ԱԱՀ)	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	1,800 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող	3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար
Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող	12,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար

Քաղվածքի առաքում փոստով (ներառյալ ԱԱՀ)	
Ներհանրապետական և ԼՂՀ	Ֆիզիկական անձանց ՝ 0 ՀՀ դրամ
Միջազգային	Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին **+** 1,500 ՀՀ դրամ

Քաղվածքի առաքում պատվիրակված առաքման ծառայության միջոցով (ներառյալ ԱԱՀ)	
Ներհանրապետական և ԼՂՀ	3,000 ՀՀ դրամ
Միջազգային	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին **+** 3,000 ՀՀ դրամ

ConverseBank

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6

Հեռախոս՝ (+37410) 58-35-14, (+37410) 59-26-64

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21